

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 30-ից մայիսի 5-ը Ֆիջիի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Արմեն Հայրապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Նադի, Ֆիջիի Հանրապետություն, ապրիլի 30-ից մայիսի 5-ը

4. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի Կառավարիչների խորհրդի 52-րդ տարեկան հանդիպմանը

6. Քննարկված թեմաները՝

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Կառավարիչների խորհրդի տարեկան հանդիպումների ընթացքում ԱԶԲ անդամ պետությունների ֆինանսների և տնտեսական պլանավորման նախարարների, պետական բարձրաստիճան պաշտոնյաների, բազմակողմ զարգացման բանկերի ներկայացուցիչների, ինչպես նաև ներդրումային բանկերի, ՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները, ԱԶԲ վարչական, ֆինանսական և գործառնական ուղղությունները և վերջիններիս զարգացումները, ինչպես նաև Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում աղքատության կրճատման և ներառական աճի ապահովման ուղղությունները:

Մասնավորապես, առաջին ընդհանուր նիստի ընթացքում ԱԶԲ նախագահի կողմից ներկայացվեցին առաջիկա տարիների համար բանկի գործունեության տեսլականը և ուղղությունները: Ներկայացվեց ԱԶԲ 2018թ. կատարողականը, այդ թվում՝ խոսվեց նաև ԱԶԲ կողմից մասնավոր հատվածի ֆինանսավորման ընդլայնումից: Նշվեց, որ բանկի կողմից գրանցվել է անդամ-պետությունների մասնավոր գործընկերներին նաև տեղական արժույթով ֆինանսավորման տրամադրման աճ: Ներկայացվեցին նաև ԱԶԲ թվային հարթակի ընդլայնման և նշյալ ոլորտի ֆինանսավորման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ նախորդ տարի հաստատված «Թվային օրակարգ 2030»-ին համահունչ: Նախագահը ընդգծեց, որ բոլոր մակարդակներում՝ զարգացման արդյունքների նվաճումից մինչև ընթացիկ գործառնությունների կատարողականը և ներքին կառավարումը, բանկի առջև դրված հիմնական նպատակները կատարվել, իսկ որոշ դեպքերում անգամ՝ գերակատարվել են: Այնուհետ ներկայացվեց ԱԶԲ 2030 Ռազմավարության կատարողականը. մասնավորապես, ընդգծվեցին մարդկային ռեսուրսների հզորացման, թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների զարգացման կարևորությունը: Նշվեց ֆինանսավորման պայմանների դիվերսիֆիկացման մտադրությունների մասին:

Հաջորդ նիստի ընթացքում քննարկվեց «2018թ. մասնավոր հատվածի գործառնությունների զարգացման արդյունավետության հաշվետվություն»-ը: Նշվեց, որ վերջին տարվա ընթացքում ԱԶԲ մասնավոր հատվածի գործառնությունները ավելացել են 37%-ով՝ կազմելով 3.1 մլրդ ԱՄՆ դոլար: 2018թ. մեկնարկել է 32 նոր ծրագիր՝ նախորդ տարվա 27-ի համեմատ:

Հաջորդ նիստերի և կլոր-սեղան քննարկումների ընթացքում քննարկվեցին ԱԶԲ կողմից խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի անդամ-պետությունների համար նախատեսվող ֆինանսական և տեխնիկական օժանդակության ուղղությունները, բնական աղետների դիմակայության ոլորտում համագործակցության հնարավորությունները, բնական պաշարների կառավարման խնդիրները և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2019թ. Ասիական զարգացման բանկի 52-րդ տարեկան հանդիպման օրակարգը հազեցած էր և ընդգրկում էր մի շարք հանդիպումներ, կլոր-սեղանի ձևաչափով քննարկումներ և միջոցառումներ:

Մասնավորապես, ԱԶԲ բարձրաստիճան ղեկավարության հետ երկկողմ հանդիպումների ընթացքում հայկական կողմը ևս մեկ անգամ ընդգծեց ԱԶԲ-ի աջակցությամբ մասնավոր հատվածում ներդրումային ծրագրերի իրականացման և մասնավոր հատվածի վարկավորման ուղղությունների հետագա զարգացումն ու ընդլայնման կարևորությունը՝ միաժամանակ հաշվի առնելով նման ձևաչափով համագործակցության համար ՀՀ-ում բարձր ներուժի և կարողությունների առկայությունը:

Հայկական կողմը կարևորեց նաև ԱԶԲ հետ բյուջետային աջակցության վարկերի տրամադրման ձևաչափով համագործակցության շարունակականության ապահովումը:

Քննարկվեցին նաև ԱԶԲ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերն իրականացնող մարմիններին յուրաքանչյուր տարվա համար հատկացվող գումարի չափը, և որոշվեց շարունակել երկկողմ համագործակցությունը վերջիններիս կողմից մասհանումների իրականացման բարձրացման և ընթացիկ ծրագրերի սահուն իրականացման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաձայնություն ձեռք բերվեց 2019-2020թթ. համար նախատեսված բյուջետային աջակցության վարկային միջոցների տրամադրման քաղաքականության աղյուսակի վերջնականացման արագացման և նախապայմանների սահուն իրականացման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ՝ կողմերի միջև արդյունավետ համագործակցության շարունակականության ապահովման, վերջինիս ուղղությունների ընդլայնման և առաջիկա տարիների համագործակցության շրջանակի վերաբերյալ հետագա աշխատանքային քննարկումները շարունակելու շուրջ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը